ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Վիզան Հայաստանում Վիզա քարտապանների համար իրականացնում է Արշավ, համաձայն որի բացառապես «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված յուրաքանչյուր Վիզա քարտապան, ով հանրագումարով 30,000 ՀՀ դրամ և ավելի արժողությամբ (մեկ կամ մի քանի կտրոնով) գնում է կատարում Դալմա Գարդեն Մոլում (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) գտնվող ցանկացած խանութից 13/10/2022թ. մինչև 26/10/2022թ. Ներառյալ և վճարում է «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված իր Վիզա քարտով՝Apple Pay-ի միջոցով, կարող է ներկայացնել համապատասխան վճարման անդորրագիրը (անդորրագրերը) (կտրոն(ներ)ը) Դալմա Գարդեն Մոլում տեղակայված պրոմո-անձնակազմին և մասնակցելով վիճակախաղին շահել երաշխավորված շահումներից մեկը (այսուհետ «Արշավ») սույն փաստաթղթով սահմանված պայմաններին համաձայն (այսուհետ «Պայմաններ և դրույթներ»):
Դալմա Գարդեն Մոլ առևտրի կենտրոնը չի հանդիսանում Արշավի կազմակերպիչ, այլ միայն տրամադրում է սույն Պայմաններ և դրույթներում նշված Արշավի անցկացման համար տարածքը:
Սույն Պայմաններին և դրույթներին համաձայնելով Դուք հայտարարում եք, որ ծանոթացել եք վիճակախաղին մասնակցելու և շահումներ շահելու պայմաններին նախքան Դալմա Գարդեն Մոլից (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) գնումներ կատարելը և վիճակախաղին մասնակցելու նպատակով համապատասխան անդորրագիրը (կտրոնը) ներկայացնելը, ինչպես նաև ընդունում եք ստորև ներկայացվող բոլոր պայմանները:
Մենք իրավունք ենք վերապահում ժամանակ առ ժամանակ վերանայել սույն Պայմաններն ու դրույթները: Խնդրում ենք պարբերաբար վերանայել Պայմաններն դրույթները՝ փոփոխությունների հետ ծանոթանալու նպատակով: Մենք որևէ պարտավորություն չենք կրում Ձեզ նախապես ծանուցելու Պայմաններում և դրույթներում ակնկալվող փոփոխությունների մասին, իսկ Դուք համաձայնում եք, որ Արշավին մասնակցում եք բացառապես սեփական ռիսկով:

1. **<u>Արշավի նկարագրությունը, պայմանները և համապատասխանությունը</u>**

Եթե Դուք «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտապան եք և վճարումները կատարել եք Apple Pay-ի միջոցով, ապա Դուք կարող եք շահել հետևյալ երաշխավորված շահումներից որևէ մեկը (այսուհետ՝«Շահումներ»)՝

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը:

Տեսակ	Քանակ
Նվեր քարտ Apple պաշտոնական խանութի՝ 500,000 ՀՀ դրամ արժողությամբ*	2 հատ
Նվեր քարտ Apple պաշտոնական խանութի՝ 200,000 ՀՀ դրամ արժողությամբ*	2 հատ
Նվեր քարտ Apple պաշտոնական խանութի՝ 100,000 ՀՀ դրամ արժողությամբ*	2 հատ
Պայուսակ՝ կտորից	200 հատ
Սինեմա Սթար կինոթատրոնի հրավիրատոմս	100 հատ

եթե Դուք միաժամանակ բավարարում եք հետևյալ պայմաններին՝

ա. Դուք համագումարով (մեկ կամ մի քանի կտրոնով) 30,000 ՀՀ դրամ և ավել արժողությամբ գնում եք կատարում «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտով՝Apple Pay-ի միջոցով Դալմա Գարդեն Մոլի (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) տարածքում գտնվող՝ գործող խանութներից որևէ մեկում (ներառյալ Ֆուդ-կորտը, Կինոթատրոն, տարածքում գործող սրճարաններ, տարածքում գործող Yerevan City սուպերմարկետ) Արշավի անցկացման օրերին, և

բ. Դուք Ձեր անդորրագիր(եր)ը (կտրոն(ներ)ը) այլ անհրաժեշտ տեղեկատվության հետ միասին (որը կարող է ողջամտորեն պահանջվել Ձեզանից սույն Պայմաններին և Դրույթներին համապատասխան) ներկայացնում եք

13/10/2022թ.-ից մինչև 26/10/2022թ.

ներառյալ Դալմա Գարդեն Մոլի (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) տեղակայված պրոմո-անձնակազմին, և

գ. Ձեր անդորրագր(եր)ի (կտրոն(ներ)ի) վրա հատուկ կնիք չի դրվել, որը ցույց է տալիս, որ Դուք արդեն մասնակցել եք Արշավին:

Միայն «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտապաններն իրավունք ունեն մասնակցել արշավին:

Միայն այն քարտապաններն իրավունք ունեն մասնակցել Արշավին և այդպիսով ստանալ շահում, որոնք ներկայացնում են «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված իրենց Վիզա քարտը և դրանում նշված տվյալները համընկնում են համապատասխան կտրոնի վրա Վիզա քարտապանի տվյալներին, որը համապատասխանում է իրենց բջջային հեռախոսում գենեռացված Apple Pay կտրոնի հետ: Ամուսինները, երեխաները կամ

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը:

ցանկացած երրորդ անձ իրավունք չունեն Վիզա քարտապանի կտրոնով մասնակցել Արշավին:
Արշավին կարող են մասնակցել բացառությամ «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտերը:
Արշավին կարող են մասնակցել միայն «Դալմա Գարդեն Մոլ» (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) առևտրի կենտրոնում գնումներ կատարած անձինք՝ ներկայացնելով անհրաժեշտ կտնորնները:

2. Արշավի ժամկետները

Արշավն իրականացվում է 2022 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ, այսինքն՝ 14 օր ժամկետով (այսուհետ ՝ «Արշավի օրեր»):
Արշավի անցկացման օրերը փոփոխության ենթակա չեն:
Արշավը կավարտվի 2022 թվականի հոկտեմբերի 26-ին երեկոյան ժամը 22:00-ին:

3.Անդորրագրերի (կտրոնների) ներկայացումը և մասնակցությունը վիճակախաղին

Վիճակախաղին մասնակցելու համար մասնակցության իրավունք ունեցող բոլոր «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտապանները պետք է համապատասխան անդորրագրերը (կտրոնները) տրամադրեն պրոմոանձնակազմին, որը տեղակայված է Դալմա Գարդեն Մոլի (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3): Պրոմո-անձնակազմը, նախքան անդորրագրի (կտրոնի) վրա կնիք դնելը, որով հավաստվում է Ձեր՝ վիճակախաղին մասնակցելու իրավունք ունենալը, պետք է ստուգի հետևյալ տեղեկությունները՝

ա. Գնումը կատարելու ամսաթիվը:
բ. Այն խանութի գտնվելու վայրը, որից կատարվել է գնումը:
գ. Անդորրագրի (կտրոնի) վրա նշված գնման գումարի չափը, ներառյալ բոլոր անդորրագրերի գումարների համագումարը, եթե առկա է:
դ. Վճարման կատարված լինելը «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թղարկված Վիզա քարտով՝ Apple Pay-ի միջոցով:

Եթե սույն Պայմաններով և Դրույթներով նախատեսված մասնակցության բոլոր չափանիշները բավարարված են, ապա պրոմո-անձնակազմը կկնքի

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը:

մասնակցության իրավունք ունեցող անդորրագրերը (կտրոնները) հատուկ կնիքով՝ կրկնակի մասնակցությունը բացառելու համար:
Դուք իրավունք կունենաք մասնակցել վիճակախաղին՝ տուփից դուրս բերելով վիճակախաղի տոմսերից մեկը, որը պարունակում է նշում Շահումի մասին, հենց որ Ձեր անդորրագիրը (կտրոնը) կնքվի:
Խնդրում ենք նկատի ունենալ, որ Արշավը երաշխավորում է Ձեր համար շահումի ստացումը: Այլ կերպ ասած, բոլոր մասնակից «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտապանները, որոնք համապատասխանում են սահմանված պայմանների և պահանջներին՝ կստանան շահում:
Խնդրում ենք նկատի ունենալ, որ Արշավի պրոմո-անձնակազմը կվերադարձնի Ձեր անդորրագիրը (կտրոնը)՝ այն կնքելուց և լուսապատճենելուց հետո:

3. Շահումների հանձնումը

Շահումն անմիջապես կհանձնվի Ձեզ Դալմա Գարդեն Մոլում (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) գտնվող մեր պրոմո-անձնակազմի կողմից: Նվեր քարտերի շահումների դեպքում պրոմո-անձնակազմը Ձեզ կտրամադրի Վկայագիր, որով հավաստվում է Ձեր՝ շահումի ստացող լինելը:
Շահումը ստանալու համար Դուք պետք է պրոմո-անձնակազմին հայտնեք Ձեր անունը, ազգանունը, ստացվող շահումի տեսակը և վավեր հեռախոսահամարը, որը հաստատում է, որ Դուք ստացել եք շահումը պատշաճ վիճակում:
Մեկ հարյուր հազար (100.000) ՀՀ դրամ և ավել շահումը ստանալու համար Ձեզանից կպահանջվի ներկայացնել Ձեր անձնագիրը և սոցիալական քարտի համարը կամ նույնականացման քարտը, բնակության հասցեն և հեռախոսահամարը: Դուք կստանաք շահումը ՀՀ, ք.Երևան, Հանրապետության 44/2 հասցեում գտնվող «Էվոկաբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակում՝ ներկայացնելով Ձեր Վկայագիրը: Ձեզ հետ լրացուցիչ կկապվեն և կտեղեկացնեն «Էվոկաբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ այցելության ամսաթվի և ժամի մասին
«Էվոկաբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակում Ձեր շահումը ստանալիս Դուք պետք է նաև ստորագրեք հանձման-ընդունման ակտը «Էվոկաբանկ» ՓԲԸ հետ, որը հանդես է գալիս որպես Արշավի կազմակերպիչ:
Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն Դուք (վերաբերում է միայն մեկ հարյուր հազար (100.000) ՀՀ դրամը գերազանցող շահումների հաղթողներին)

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը:

պարտավորվում եք վճարել 21% դրույքաչափով հարկվող եկամտային հարկ բոլոր այն շահումների համար, որոնք Դուք ստանում եք վիճակախաղերի շրջանակներում և որոնց արժեքը գերազանցում է 100,000 ՀՀ դրամը: «Էվոկաբանկ» ՓԲԸ հանդես կգա որպես Ձեր հարկային գործակալ և կվճարի Ձեր եկամտային հարկը Ձեր անունից անմիջապես հարկային մարմիններին: Ձեր անձնագրային տվյալները, ներառյալ Ձեր անձնական տվյալները, հավաքագրվում և մշակվում են «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն հարկային պարտավորությունների կատարման նպատակով:

5. <u>Բացառություններ</u>

Մասնակցության պայմանները չբավարարող անդորրագրերը (կտրոնները) չեն մասնակցում Արշավին: Տարընկալումներից խուսափելու համար սահմանվում է, որ հետևյալ տեսակի անդորրագրերը (կտրոնները) չեն մասնակցի Արշավին՝

ա. Այն անդորրագրերը (կտրոնները), որոնք վերաբերում են ոչ «Էվոկաբանկ» ՓԲԸ կողմից թողարկված Վիզա քարտերով կատարված գնումներին:

բ. Այն անդորրագրերը (կտրոնները), որոնք վերաբերում են Արշավի օրերից դուրս կատարված գնումներին:

գ. Այն անդորրագրերը (կտրոնները), որոնցով կատարված գնումների համագումարը չի գերազանցում 30,000 ՀՀ դրամը:

ե. Այն անդորրագրերը (կտրոնները), որոնք վերաբերում են «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնի (հասցե՝Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3) տարածքից դուրս գտնվող խանութներում կատարված գնումներին:

զ. Այն անդորրագրերը (կտրոնները), որոնք վավերացվել են մեր պրոմո-անձնակազմի հատուկ կնիքով՝ որպես Արշավին արդեն մասնակցած կտրոններ:

6. <u>Պատասխանատվությունը</u>

Մենք պատասխանատվություն չենք կրում Արշավի շրջանակներում Ձեր կողմից ստացված Շահումների ցանկացած անսարքության, խնդիրների, կամ որևէ թերության դեպքում: Սույն Պայմաններին և Դրույթներին համաձայնելով, Դուք համաձայնում եք ազատել մեզ Արշավի և Շահումների հանձնման հետ

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը:

կապված ցանկացած տեսակի և ձևով պատասխանատվությունից: Դուք չեք կարող Ձեր շահումին վերաբերող որևէ պահանջ ներկայացնել «Էվոկաբանկ» ՓԲԸ՝ որպես Արշավի կազմակերպչին, կամ Վիզային:

7. <u>Անձնական տվյալների մշակման համաձայնություն</u>

Դուք սույնով ծանուցվում եք այն մասին, որ մեր հաշվետվողական պարտավորությունների կատարման, ինչպես նաև ՀՀ Հարկային օրենսգրքին համապատասխան հարկային հաշվառում և հարկային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորության կատարման նպատակով Արշավին Ձեր մասնակցության ժամանակ Ձեզանից կարող է պահանջվել մեզ տրամադրել որոշ անձնական տվյալներ: Համաձայնելով սույն Պայմաններին և Դրույթներին՝ Դուք ուղղակիորեն մեզ տալիս եք Ձեր անձնական տվյալները մշակելու համաձայնություն, ինչպես նախատեսված է սույն կետ 8-ում. հետևապես, Ձեր անձնական տվյալների մշակման իրավական հիմքն է հանդիսանում Ձեր գրավոր համաձայնությունը:

ա. **<u>Հավաքագրվող անձնական տվյալների տեսակը</u>**

Կախված ձեր շահումի տեսակից՝ Ձեզանից կարող է պահանջվել մեզ տրամադրել Ձեր անունը, ազգանունը, հեռախոսահամարը, ստորագրությունը և ձեր անդորրագրի (կտրոնի) վրա նշված ցանկացած անձնական տվյալ (գործում է Արշավի բոլոր մասնակիցների համար), ինչպես նաև Ձեր անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, սոցիալական քարտի համարը, բնակության հասցեն (գործում է միայն մեկ հարյուր հազար (100.000) ՀՀ դրամը գերազանցող շահումների հաղթողների համար), որոնք այսուհետ միասին՝ «Անձնական տվյալներ»:

բ. **<u>Անձնական տվյալների հետ կատարվող գործողությունները</u>**.

Ձեր համաձայնության հիման վրա Ձեր անձնական տվյալները կարող են հավաքագրվել, պահպանվել, ուղղվել, համակարգվել, օգտագործվել, փոխանցվել, վերականգնվել կամ ոչնչացվել, բոլորը միասին այսուհետ՝ «Մշակում»՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Դուք ուղղակիորեն համաձայնվում եք, որ Ձեր Անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս, այդ թվում առանց սահմանափակման, Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններին՝ եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար, Վիզային և նրա բոլոր դուստր ընկերություններին և խմբի ընկերություններին՝ արշավի արդյունքների

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը:

մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակներով, ցանկացած ենթակապալառուի կամ արշավին մասնակցող գործակալության:

գ. **Համաձայնության հետկանչը**.

Դուք կարող եք հետ կանչել Ձեր Անձնական տվյալների մշակման համաձայնությունը ցանկացած ժամանակ, կապվելով «Էվոկաբանկ» ՓԲԸ հետ՝ հետևյալ հասցեով hello@evoca.am և ուղարկելով գրավոր պահանջ: Մենք պարտավորվում ենք դադարեցնել Ձեր Անձնական տվյալների Մշակումը և ոչնչացնել դրանք, եթե մեզանից չի պահանջվում, որ դրանք արխիվացվեն և պահվեն համաձայն որևէ իրավական պարտավորության:

դ. **Համաձայնության ժամկետը**. Ձեր համաձայնությունը համարվում է տրամադրված Արշավին ձեր մասնակցության պահից և գործում է 10տարի ժամկետով, եթե ավելի վաղ հետ չկանչվի:

ե. **Իրավունքները**.

Դուք օգտվում եք բոլոր իրավունքներից և կրում եք բոլոր պարտականությունները, որոնք տվյալների սուբյեկտի համար նախատեսված են Հայաստանի Հանրապետության «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով:

- Գումարները չեն ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական բյուջե վճարման ենթակա հարկերը: